ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՄԱՅԻՍԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 41

«ՎԱՐԴԳԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ» ԱՁ-ԻՆ ԺԱՄԸ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13-ի թիվ 5-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով «Վարդգես Հովսեփյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Վարդգես Հովսեփյան» ԱՁ–ին տրամադրել ժամը 24:00-ից հետո առևտրի կազմակերպման թույլտվություն՝ 2017թվականի մայիսի 1-ից 2017թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 17 թ. մայիսի 10
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՄԱՅԻՍԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 42

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով «Արտէդ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև Ասյա Կարպիսի Մելքոնյանի ներկայացրած դիմումը՝ **որոշում եմ.**

1. Թույլատրել Գայանե Սոխակի Ղարիբյանին, Աշոտ Կարպիսի Մելքոնյանին, Արման Կարպիսի Մելքոնյանին, Հասմիկ Կարպիսի Մելքոնյանին և Ասյա Կարպիսի Մելքոնյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 1-ին փողոց թիվ 65 հասցեում գտնվող 730 քմ բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասը և դրա վրա գտնվող շինությունները բաժանել 2 մասի՝ 330 քմ և 400 քմ:

2. Հողամասի 400 քմ հատվածին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 1-ին փողոց թիվ 65/1, իսկ 330 քմ հատվածի հողամասի և դրա վրա գտնվող շինության հասցեն թողնել ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 1-ին փողոց թիվ 65:

3. Սույն որոշումն ուժի մեջ է գտնվում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 17 թ. մայիսի 11
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՄԱՅԻՍԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 43

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՀԱԳՆ ՇՄԻԴՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Արտէդ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի բաժանման հատակագիծը, ինչպես նաև Վահագն Կարապետյանի ներկայացրած դիմումը՝ **որոշում եմ.**

1. Թույլատրել քաղաքացի Վահագն Շմիդտի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնքում գտնվող, 07-062-0202-015 կադաստրային ծածկագրով 410քմ գյուղատնտեսական նշանակության վարելահողը բաժանել 2 մասի՝ 249 քմ և 161 քմ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 17 թ. մայիսի 11
գ.Վերին Պտղնի